

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ

(2 մարտի 2003 թ.)

«Զանգի զԱստուած տեսանէր միշտ
խոնարհեալ ի դրախտին»:
(Շարակնոց)

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Այս խոսքերը սրբազան շարականագիրն ասում է Բուն Բարեկենդանի կիրակիին նվիրված շարականում: Այդամի մասին է ասում շարականագիրը, թե ինչպես նա երանական կյանքի մեջ հաճախ տեսնում էր Աստծուն՝ իջած դրախտ և իր հետ գրուցելիս:

Այսօր, սիրելի հավաքացյալներ, Բուն Բարեկենդան է: Ուրախության ու ցնծության տուն է, սակայն, ինչպես տեսնում եք, մեր եկեղեցիների խորաններն արդեն փակվել են, որովհետև վաղվանից սկսվում են ապաշխարության և խոկումի օրերը, և մենք այսօր Բուն Բարեկենդանի տոնի օրը, մեզ պարտաստում ենք երկուշաբթի օրվանից սկսվող քառասնօրյա պահոց շրջանի համար: Պողոս առաքյալը հռոմեացիներին գրած թղթում ասում է, որ նոր մարդ դառնանք, այսինքն ապաշխարության այս շրջանը մեզ համար լինի վերանորոգվելու և մեղքից հեռու մնալու մի շրջան, որպեսզի ապաշխարության, զոջումի միջոցով կարողանանք մեր հոգիները մեղքի կապանքներից, մեղքի կեղտից ազատել և ձգտել դեպի աստվածայինը, դեպի բարձրագույնը, դեպի վսեմագույնը, որ Աստված Ինքն է:

Պողոս առաքյալի կյանքի օրինակով տեսնում ենք, թե ինչպես նա հալածող էր քրիստոնյաներին: Երուսաղեմ քաղաքում նա հալածեց Տիմոսին բոլոր հեթանոսներին, բանտարկեց, մինչև իսկ մահվան դատապարտել տվեց, և երբ մի օր նա գնում էր Դամասկոս՝ այնտեղ քրիստոնյաներին բռնելու, չարհարելու և հալածելու համար, հանկարծ ճանապարհին նրա աչքի առջև բացվեց երկնային լույսը, աչքերը կուրացան և նա այլևս չկարողացավ տեսնել, և այդ լույսի միջից մի ձայն ասաց նրան. «Սողոս, ինչո՞ւ կհալածես զիս»:

Պողոս առաքյալի՝ այն ժամանակ Սողոս հեթանոսի աչքերը կուրացան և իրեն պատվեր տրվեց, որ գնա Դամասկոս, այնտեղ տեսնի Անանիային՝ հավաքացյալ քրիստոնյային, որ պիտի կարողանար աղոթքով դարձի բերել Սողոսին՝ դարձնելու համար նրան Պողոս առաքյալ՝ մեծագույն ջարագովը քրիստոնեական Եկեղեցու:

Սիրելի հավաքացյալներ, ապաշխարության շրջանը մեզ համար շատ կարևոր է, որովհետև ապաշխարության միջոցով, զոջումի միջոցով կկարողանանք մենք մեր մեղքերը քավել, մեղքերի ծանր բեռից ազատվել և նայել դեպի Երկնավոր մեր Նայրը պայծառ աչքերով և սպասել Նրա օրհնաբեր այցին մեր հոգիներից ներս: Չէ՞ որ Տիմոս ևս քառասուն օր պահեցողություն արեց, ծոմ պահեց, որպեսզի կարողանար սկսել փրկչական Իր քարոզությունը: Եվ այդ քառասուն օրերի ավարտին, ստորանան մոտեցավ Տիմոսին և ասաց. «Տիմոս, եթե Աստված ես, որ այս քարերը հաց դառնան, որ Դու ուրեմս»: «Ասված է՝ մարդը միայն հացով չի կարող ապրել, այլև Աստծո խոսքով», - ասաց մեր Տերը:

Երկրորդ անգամ սափաանակ Նրան փարավ Երուսաղեմի բարձունքների վրա և ասաց. «Այսպեղից Դու Քեզ վար նեփիր, և ինչպես հրեշտակներին պատվիրված է, ինչպես սաղմոսերգուն է ասում. «Տրեշտակաց յուրոց պատվիրյալ է, որ Քո ուրբերը քարի չդիպչեն»։ Այդպեղ ևս մեր Տերը ասաց, որ միայն պետք է պաշտես քո Տեր Աստծուն։ Այսինքն աշխարհի հարսությունը ոչ մի բան չի նշանակի, ամեն բան այս կյանքի մեջ անցավոր է, այս կյանքի մեջ ամենակարևորը հոգուն, Աստծուն ձգտումն է և հոգու մաքրությունն է, որին պետք է ձգվենք։

Այս սափաանակ Տիտուսին բարձրացրեց Սիոնի բարձունքը և ամբողջ աշխարհը ցույց տվեց և ասաց՝ ինձ երկրպագություն արա, որպեսզի այս բոլորը Քեզ հանձնեն։ Տիտուս ասաց. «Եփրս գնա, սափաանա՛, քո Աստծուն մի փորձիր», որովհետև մենք միշտ պիտի պաշտենք մեր Աստծուն և Նրա առջև երկրպագություն պիտի անենք։

Սիոնի հավաքացյալներ, ի՛նչ է մեզ համար ապաշխարության այս շրջանը. բարիք գործել, ողորմություն տալ, վաղ սովորություններից հեռու մնալ, մարմնի պահանջները մեկ կողմ թողնել, հոգու փրկության, հոգու ճանապարհների մասին մտածել, ողորմություն անել, բարիք անել, բամբասանք չանել, չարություն չգործել, հարևաններին թշնամություն չանել և եթե մենք ունենք հոռի մոլորություններ կամ մեղքի աղբյուրներ, պետք է կարողանանք ձերբազատվել դրանցից։

Դուք պետք է կարողանաք ձեր կամքի ուժով կտրվել մսեղենից, կենդանական կերակուրներից և ճաշակել բուսականը, ընդեղենը։ Այս է մեզ ուսուցանում պառիկ պատվերը։ Եթե բժշկի հայտնած խրափոփ պիտի կենդանական կերակուրներից կտրվեք, դա երբեք ապաշխարություն չէ, այլ սննդի բժշկական չափավորություն։ Մենք պետք է կարողանանք մեր կամքի ուժը դաստիարակել և պետք եղած ձևով մեր կամքին հնազանդվենք, այդպիսով ընդունելով Աստծո հնազանդության ճանապարհը և միջոցը, որովհետև Աստծո հնազանդությունը, մանավանդ ապաշխարության և զոջումի միջոցով մեր հոգիների համար պիտի լինի նոր միջոց զԱստված ընդունելու մեր մեջ, Աստծուն ճանաչելու և բնակեցնելու մեր մեջ և այդպիսով Աստված դարձնելով մեր տերը և առաջնորդը։

Այլապես, եթե կամքի ուժը չպիտի կարողանանք դաստիարակել, ապաշխարության ամբողջ շրջանը ի դերն անցած պիտի լինի։ Միայն ապաշխարության այս շրջանը չէ սակայն, որ մեզ պիտի դաստիարակի, մեր կյանքին նոր ուղղություն հաղորդի և նոր զգեստ հագցնի՝ արդարության զգեստը, այլ հաճախ մեր կյանքի մեջ պիտի անդրադառնանք և գտնենք միջոցը և ճանապարհը Աստծուն ծառայելու և զԱստված մեր մեջ բնակեցնելու համար։

Անավասիկ, Բուն Բարեկենդանի այս օրը աշխարհի փարբեր կողմերում մարդիկ երբեմն այնպիսի անպարշաճ կերպով են կատարում այդ տոնակատարությունը, մերկապարանոց փողոցներն են իջնում, պարում են, խնջույքներ են սարքում և այդպիսով իբր թե պարարաստվում են գալիք օրերի ապաշխարության շրջանի համար։ Ո՛հ, դա ճիշտ ձևը չէ, ճիշտ ձևն այն է, որ մենք մեր մեջ կարողանանք գտնել Աստծուն և հնազանդվել Աստծուն։

Այս խոսքերով ձեզ մաղթում եմ պահեցողության քառասնօրյա մի փառավոր շրջան, որպեսզի աղոթքով, ողորմածությամբ, սիրով, հարգանքով իրար հետ կարողանաք ապրել, աստվածայինը երկնքից երկիր իջնելու ձեր միջոցով և մեր ժողովրդի բարօրության ռապի-րաները դառնալ այս կյանքի ընթացքում։

Այս մաղթանքով Մուրբ Երրորդության օրհնությամբ օրհնյալ լինեք այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն։